# ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

93-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 123 (24676), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودوسوم - شماره (٢٤٦٧٦) ١٢٣ - تکشماره ٢٠٠٠٠ ریال - ٨ صفحه

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

26 ՅՈՒՆԻՍԻ 2024

چهارشنبه – ۶ تیر ۱۴۰۳

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی


Իսլ. յեղափոխութեան առաջնորդ.

# «ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԱՌԱՒԵԼԱԳՈՅՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՃԻՇՏ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԵՒՈՐ Է»




*«ԱԼԻՔ» - Ղադիր տօնի առիթով, երէկ՝ յունիսի 25-ին Իսլ. յեղափոխութեան առաջնորդ այաթ. Սէյէդ Ալի Խամենէին հանդիպել է հազարաւոր քաղաքացիների հետ:*

*Իր ելոյթում Իսլ. յեղափոխութեան առաջնորդն ի թիւս այլ հարցերի, յատուկ անդրադարձել է առաջիկայ ուրբաթ օրը կայանալիք նախագահական ընտրութիւններին՝ կարեւորելով ժողովրդի ակտիւ մասնակցութիւնն ու ճիշտ ընտրութիւն կատարելը:*

*Ժողովրդական նախագահի՝ այաթ. Ռէյիսիի նահատակութիւնից 40 օր անց ընտրութիւնների անցկացումը համարելով աշխարհում հազւադէպ երեւոյթ, այաթ. Խամենէին յոյս է յայտնել, որ Աստուած այս ընտրութիւններում կը փառաւորի Իրանի ժողովրդին:*

*Իսլ. յեղափոխութեան առաջնորդն անդրադառնալով համակարգի դէմ շարունակւող թշնամանքին, նրա հիմնադրումից մինչ օրս, դրանց յաղթահարման կարեւոր գործօն է համարել ընտրութիւններն ու դրանցում ժողովրդի առաւելագոյն մասնակցութիւնը՝ նշելով. «Հանրապետականութիւնը եւ ժողովրդի մասնակցութիւնը Իսլամական Հանրապետութեան էութիւնն են, եւ երկրի ղեկավարի ընտրութիւնը դրանց կարեւորագոյն դրսեւորումն է»:*

*Այաթ. Խամենէին բոլորին կոչ է արել կարեւորել ընտրութիւններն ու ակտիւօրէն մասնակցել դրանց՝ յատուկ ընդգծելով արժանաւոր թեկնածուի ընտրութիւնը. «Արժանաւորը նա է, ով առաջին հերթին հաւատում է յեղափոխութեան եւ համակարգի սկզբունքներին այնպէս, ինչպէս յանուն ծառայութեան նահատակուած նախագահ Ռէյիսին, ով աշխատում էր հոգով, սրտով եւ համոզմունքով»:*

*Իսլ. յեղափոխութեան առաջնորդն արդիւնաւէտութիւնը եւս համարելով արժանաւոր թեկնածուի կարեւոր յատկանիշերից մէկը՝ ասել է. «Աշխատունակութիւն նշանակում է գիշեր ու ցերեկ չճանաչել եւ անդուլ աշխատել՝ ընտրելով եւ օգտագործելով լաւ գործընկերներ»:*

*Այաթ. Խամենէին քննադատելով երկրի որոշ քաղաքական գործիչներին, որոնք առաջընթացի համար աշխարհի այս կամ այն գերտէրութիւնից կախուածութիւնը համարում են անխուսափելի, եւ տարուած են այն պատրանքով, որ առաջընթացի բոլոր ուղիներն անցնում են ԱՄՆ-ով, ասել է. «Նրանք, ովքեր իրենց հայեացքներն ուղղել են երկրի սահմաններից դուրս, չեն կարողանում տեսնել ու հաւատանշել երկրում առկայ կարողութիւնները եւ, բնականաբար, չեն կարողանում ծրագրաւորել դրանց արդիւնաւէտ օգտագործումը»:*

*Անդրադառնալով ոմանց կողմից «ներքին հնարաւորութիւնների օգտագործման շեշտադրման» սխալ վերագրմանն առ այն, որ դա նշանակում է «ցանկապատել երկիրն ու խզել կապերն աշխարհի հետ», Իսլ. յեղափոխութեան առաջնորդն ասել է. «Մենք ի սկզբանէ փորձել ենք յարաբերուել ամբողջ աշխարհի հետ, բացառութեամբ մէկ-երկու երկրի, եւ, ի դէպ, նահատակ Ռէյիսիի կառավարութիւնների պէս կառավարութիւններում, որոնք խստօրէն պահպանել են սկզբունքները, երկրի արտաքին յարաբերութիւններն ամրապնդուել են»:*

*Իր ելոյթի աւարտին, այաթ Խամենէին ակնարկելով «հզօր ու հպարտ Իրան» կարգախօսին նշել է, որ ով հաւատում է այդ կարգախօսին պարտաւոր է եւ պէտք է մասնակցի ընտրութիւններին, իսկ թեկնածուներին կոչ է արել խոստանալ Աստծուն, որ ընտրուելու դէպքում, իրենց գործընկերներին չեն ընտրի նրանց շարքերից, ովքեր խնդիրներ ունեն Իսլամական յեղափոխութեան հետ:*

## Նախագահական թեկնածուներ՝ Ալիռեզա Զաքանիի եւ Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆի շտաբների ցանկութեամբ հանդիպում ազգային առաջնորդարանի դահլիճում





Իրանի 14-րդ նախագահական ընտրութիւնների թեկնածուների ընտրապայքարի շրջագծում, նախագահական թեկնածուներ՝ Ալիռեզա Զաքանիի եւ Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆի շտաբների ցանկութեամբ՝ երկուշաբթի, յունիսի 24-ին ազգային առաջնորդարանի դահլիճում, ներկայութեամբ շտաբների ներկայացուցիչների առանձին

**(Շար. 8-րդ էջում)**

Եւրօ-2024.

## Աւստրիական անակնկալը




*«ԱԼԻՔ» - Ֆուտբոլի Եւրոպայի առաջնութեան խմբային փուլը մօտենում է եզրագծին, եւ աստիճանաբար յայտնի են դառնում փլէյ-օֆֆի բոլոր մասնակիցները:*

*Երէկ՝ յունիսի 25-ին կայացած 4 հանդիպումների արդիւնքում, որոշուեց C եւ D խմբերի ճակատագիրը: Ամենամեծ անկնկալը թերեւս տեղի ունեցաւ D խմբում, որտեղ Ֆրանսիայի եւ Հոլանդիայի ներկայութեամբ, խմբից առաջին տեղով յաջորդ փուլ դուրս եկաւ Աւստրիայի ընտրանին: Աւստրիացիները վերջին խաղում 3:2 հաշւով պարտութեան մատնեցին Հոլանդիայի ընտրանուն, եւ վաստակելով 6 միաւոր, գլխաւորեցին խմբի մրցաշարային աղիւսակը:*

*Այս խմբի միւս խաղում Ֆրանսիայի եւ Լեհաստանի հաւաքականները ոչ-ոքի՝ 1:1 խաղացին, ինչի արդիւնքում էլ ֆրանսիացիները վաստակելով 5 միաւոր, երկրորդ տեղով դուրս եկան յաջորդ*

**(Շար. 8-րդ էջում)**

## Թեկնածուների մեդիա-քաղաքականութիւնը




*«ԱԼԻՔ», ՀԱՏԻՍ - Ընտրական շտաբներն իրենց գործունէութիւնը սկսում են ընտրութիւններից մի քանի ամիս առաջ՝ հրաւիրելով փորձագէտների որոշելու համար կենտրոնական շտաբի եւ տեղական շտաբների վայրը: Նրանց միջոցով է նախագծւում ու ձեւակերպւում քարոզարշաւի ռազմավարութիւնը:*

*«Ֆարդա ռեսանէ» ուսումնասիրութիւնների կենտրոնն իր հրապարակած վերլուծութեան մէջ փորձել է համեմատական կարգով, ներկայացնել թեկնածուներից իւրաքանչիւրի վիրտուալ հարթակներում քարոզարշաւային մեթոդներն ու հնարքները:*

### Փեզեշքեանի կարճ տեքստերով յայտարարութիւնները

*Ինչպէս միւս թեկնածուների դէպքում, Փեզեշքեանը եւս իրեն համարում է ժողովրդի պահանջով առաջադրուած ու նրա սրտից բխած թեկնածու: Այս մասին ընդգծուած նշումներ կան իր նախընտրական վաւերագրական «Մայրական տուն» ֆիլմում եւս: Նրա քարոզարշաւային ռազմավարութիւնը կարճ տեքստերի եւ յստակ խոստումների օգտագործումն է: Նոյնը կարելի է նկատել նաեւ տարբեր շրջաններ կատարած այցերի ընթացքում հասարակութեան հետ շփումներում:*

### Փուր Մոհամմադին նկատելիօրէն չերեւացողն է քաղաքում

*Մոստաֆա Փուր Մոհամմադին իր հնարաւոր ապագայ կառավարութիւնն անուանել է «Պայման»: Այս ընթացքում նրա փոխանցած հաղորդագրութիւնները ու քարոզարշաւում ուշագրաւ քաղաքական հոսանքներին նրա չպատկանելն է, որն էլ ընդգծուած նշել է ինքը Փուր Մոհամմադին: Բաններ ու պաստառներ օգտագործելու հարցում նա եւս նման չէ իր մրցակիցներին: Նա ընդգծուած բարձրաձայնում է արւեստի գործիչներին աջակցելու իր ծրագրերի մասին*

### Ջալիլին երկար տեքստերով

*Սաիդ Ջալիլիի հիմնական ռազմավարութիւնը ժողովրդական հանդիպումներն ու անմիջական շփումներն են: Ջալիլիի քարոզարշաւում նկատելի են երկար տեքստերի եւ նոյն շնչով տեսանիւթերի օգտագործումը: Ջալիլի շտաբը փորձում է նաեւ դիպուկ հնչեղութեամբ տարբեր կարգախօսներ*

**(Շար. 8-րդ էջում)**



*«Հոգին կը գտնեմ ու կը վերլուծեմ, կը սիրեմ հոգեկան հարցերով զբաղիլ, հոգեկան խուլ պայքարներուն պատմագիրն ըլլալ... քամելիոնի այլակերպութիւններէն կը վախենամ, ամէն ճաշակի պատշաճելու դէմ ջանադիր թերթ մը՝ իմ սիրածս չէ»*

*Գրիգոր Զոհրապ (1861-1915)*

*արեւմտահայ մեծանուն գրող, փաստաբան եւ քաղաքական գործիչ*

Յունիսի 26-ը Գրիգոր Զոհրապի ծննդեան օրն է:

ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Վահէ Սարգսեան.

# «Փաշինեանի ամէն քայլն ու օրը սրընթաց մօտեցնում են նոր ու աւելի կործանարար պատերազմին»



«ԱԼԻՔ» - Yerkir.am-ի՝ գլխաւոր խմբագիր Վահէ Սարգսեանը ֆէյսբուքեան իր էջում գրառում է կատարել՝ անդրադառնալով նախօրէին Նիկոլ Փաշինեանի նախագահութեամբ տեղի ունեցած ՔՊ քաղաքական նիստին.

«Մամուլում գրուեց, որ անցեալ շաբաթ օրը տեղի ունեցած ՔՊ քաղաքական ժողովին Փաշինեանը որեւէ յստակեցում չի արել՝ ի վերջոյ ի՞նչ է սպասւում սահմանազատման արդիւնքում, ու՞ր է գնում Հայաստանը:

Աւելին՝ այլեւ անթաքոյց յայտարարել է՝ որեւէ երաշխիք չկայ, որ սահմանազատումից կամ միւս պահանջների կատարումից հետոյ Ադրբեջանը վերջնական խաղաղութեան կը գնայ ու այլեւ սադրանքների չի դիմի:

Սա արդէն որերորդ անգամն է, որ Նիկոլ Փաշինեանն ուղիղ ասում է՝ ինքը չգիտի այն սահմանագիծն ու ժամը, թէ որտեղ եւ երբ կաւարտուեն Ադրբեջանի պահանջները:

Աւելին, Ալիեւն ապրիլին տուած իր հարցազրոյցում նոյնքան ուղիղ ասել է՝ սահամագծման ու ՀՀ-Ադրբեջան յարաբերութիւնների կարգաւորման (իմա՝ խաղաղութեան) գործընթացներն ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՄԲ ՏԱՐԱՆՋԱՏԻԱԾ ԵՆ: Եւ որ սահամանգծումը դա երկարատեւ ու ԱՌԱՆՁԻՆ մի գործընթաց է, որը ԲՈՂՈՐՈՎԻՆ ԿԱՊ ՉՈՒՆԻ Ադրբեջանի պահանջներով ձեւաւորուող խաղաղութեան օրակարգի հետ:

Հետեւաբար, Փաշինեանի այն յայտարարութիւնը, թէ մենք սահմանագծմամբ ստանում ենք անվտանգութեան ռիսկերի նուազում, ՈՒՂՂԱԿԻ ԽԱԲԷՈՒԹԻՒՆ է եւ հայ ժողովրդին հերթական անգամ ծուղակի մէջ պահելու գաւառական ճարպկութիւն:

Իրականում՝ Փաշինեանական «սահմանազատում-սահմանագծումը» ՈՉ ԹԷ ՆՈՒԱԶԵՑՆՈՒՄ, ԱՅԼ ՇԵՇՏԱԿԻ ԱՒԵԼԱՑՆՈՒՄ է անվտագութեան ռիկսերը: Քանզի ՀՀ-ին ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄԻՑ ԱՌԱՆՁՆԱԲԱՐ ներկայացուող ադրբեջանական պահանջները (աւելի ճիշտ՝ սպառնալիքները) գնալով մեծանում են, իսկ «սահմանագծումով» աւելի հարմար դիրքաւորուող ու առանց կրակոցի երկրի խորքը ներթափանցող թշնամին դրանով ստանում է սեփական կործանարար պահանջները շանտաժով ու սպառնալիքներով պարտադրելու անգնահատելի հնարաւորութիւն:

Փաշինեանի ամէն քայլն ու օրը սրընթաց մօտեցնում են նոր ու աւելի կործանարար պատերազմին: Իսկ խաղաղութիւնը լինելու է կա՛մ ՀՀ մասնատմամբ ու հայ ժողովրդի ստրկացմամբ, կա՛մ Արցախի վերաազատագրմամբ ու նոր անվտանգութեան համակարգի ստեղծմամբ»,- գրել է նա:

# Փաշինեանը բացել է իր «իրական Հայաստանի» փակագծերը

ՔՊ-ի Հանքաւանի ժողովի ժամանակ Փաշինեանը բացել է իր «Իրական Հայաստան»-ի փակագծերը, որից պարզ է դարձել, որ նա դրա ներքոյ փորձում է կեանքի կոչել Ալիեւի հետ պայմանաւորուածութիւնները՝ ՀՀ տարածքների վերաբերեալ պահանջները: «Իրական Հայաստանի գաղափարախօսութիւնը հետեւեալն է, երբ ժողովուրդն ասում ա՝ լսեք, չենք ուզում այլեւս մաքառել, գոյատեւել, տառապել, չենք ուզում զոհաբերուել, ուզում ենք ուղղակի ապրել:

Եւ ժողովրդի ուղերձն իր էլիտաներին եւ մեզ՝ որպէս կառավարող մեծամասնութեանը, հետեւեալն է. կարո՞ղ էք ստեղծել պայմաններ, որ ուղղակի ապրենք, պարզապէս ապրենք»,- ասել է նա՝ իւրայիններին հասկացնելով, որ ինչ ուզի Ալիեւը, տալու եմ, որ ապրենք, վայելենք իշխանական բարիքները:

Ոմանք գլխի են ընկել նրա ասածի իրական իմաստը, սկսել է հարցերի տարափ՝ սահմանազատման, տարածքային զիջումների մասին: Նա յստակ պատասխաններ չի տուել՝ կրկնելով, որ Ադրբեջանն ինչ ուզի, տալու ենք, որ պատերազմ չսկսի:

Չնայած ՔՊ-ականները չեն համարձակուել առճակատման գնալ, բայց ակնարկել են, որ չի կարելի ամէն ինչ զիջել, մանաւանդ որ դա խաղաղության երաշխիք չէ, սակայն



ժողովից յետոյ խմբերով ակտիւ քննարկել են, որ այս ամէնից վատ հոտ է գալիս՝ եթէ Տաւուշը մարսեցինք, չի նշանակում, որ Տիգրանաշէնը կամ Ջերմուկն էլ ենք մարսելու:

**«Հրապարակ»**

Վարդան Ոսկանեան.

# «Չի կարող ինչ-որ մէկը հանդէս գալ ՀՀ ինքնիշխանութեան դիրքից եւ աւելի ամրապնդել վտանգի աղբիւրը»

«ԱԼԻՔ» - Իրանագէտ Վարդան Ոսկանեանը սոցցանցերի իր հարթակներում գրառում է կատարել՝ ՀՀ գործող իշխանութիւնների տարբեր ներկայացուցիչների կողմից «ինքնիշխանութիւն» բառի շահարկամանը.

«Նրանք, որոնք պարբերաբար մաշեցնում են «ինքնիշխանութիւն» բառը, պէտք է նաեւ յստակ արձանագրեն, որ Հայաստանի ոչ միայն ինքնիշխանութեան, այլ նաեւ գոյութեան իսկ թիւ մէկ մշտական մարտահրաւէրը եւ վտանգը բխում է արհեստածին Ադրբեջանից:

Ըստ այդմ, եթէ ինչ-որ մէկն իրօք ձգտում է Հայաստանի ինքնիշխանութեանը կամ դրա ամրապնդմանը, ապա չի կարող չխօսել այս գոյութենական մարտահրաւէրի եւ





վտանգի չէզոքացման կամ ոչնչացման մասին:

Չի կարող ինչ-որ մէկը հանդէս գալ Հայաստանի ինքնիշխանութեան դիրքերից եւ անել ամէն ինչ, որպէսզի այդ մարտահրաւէրի ու վտանգի աղբիւր քաղցկեղային գոյացութիւնն էլ աւելի ամրապնդուի եւ հզօրանայ:

Հետեւաբար, բանաձեւը բաւականին պարզ է՝ Հայաստնի ինքնիշխանութեան եւ անկախութեան համար պայքարն առաջին հերթին ենթադրում է պայքար հէնց արհեստածին Ադրբեջանի դէմ, այլ ոչ թէ արհեստածին Ադրբեջանին յանձնուել»,- գրել է նա:

# Վիշապն արթնացել է

ՎԱՀԷ ԴԱՒԹԵԱՆ
Քաղաքական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր,
Էներգետիկ անվտանգութեան փորձագէտ



Նոր աշխարհակարգի ձեւաւորումն իր առաւել ցայտուն դրսեւորումն է ստանում Մերձաւոր Արեւելքում, ինչը որոշակի մարտահրաւէրներ է պարունակում նաեւ Հայաստանի համար:

Վերջերս Սաուդական Արաբիան յայտարարեց 1974 թ.-ին ԱՄՆ հետ



կնքուած նաւթային համաձայնագիրը չերակարցնելու որոշման մասին, ինչը լուրջ խնդիրներ կարող է ստեղծել Վաշինգտոնի գլխաւոր աշխարհաքաղաքական գործիքի՝ դոլարի համար:

Օրերս էլ յայտնի դարձաւ, որ Իրանն ու Բահրէյնը պատրաստւում են վերականգնել դիւանագիտական յարաբերութիւնները, որոնք խզուել էին դեռ 2016 թ.-ին՝ Վաշինգտոնի ուղիղ ճնշման ներքոյ:

Յատկանշական է, որ Բահրէյնը Մերձաւոր Արեւելքում ԱՄՆ-ի առանցքային սաթելիտներից էր: Բաւական է նշել, որ Բահրէյնի ջրերում է տեղակայուած ԱՄՆ 5-րդ ռազմական նաւատորմը:

Թէ՛ Ալ-Ռիադի, թէ՛ Մանամայի որոշումները կարող են որակուել որպէս Մերձաւոր Արեւելքում ԱՄՆ ռազմավարական նահանջ, ինչը յատկապէս ընդգծւում է տարածաշրանում Չինաստանի ազդեցութեան աճի ֆոնին:

Թէ՛ իրանա-սաուդական (2023), թէ՛ իրանա-բահրէյնեան յարաբերութիւնների կարգաւորումը փաստացի տեղի է ունենում Պեկինի միջնորդութեամբ: Վերջինս, սթափ գիտակցելով Պարսից ծոցի երկրների կարեւորութիւնը էներգակիրների մատակարարման հարցում, դինամիկօրէն զարգացնում է սեփական արտաքին քաղաքականութեան մերձաւորարեւելեան վեկտորը: Սակայն եթէ ի սկզբանէ այդ վեկտորի սնուցումը տեղի էր ունենում բացառապէս գէոտնտեսական մի ջոցներով, ապա վերջին տարի ներին, յատկապէս՝ 2017 թ.-ից ի վեր, երբ Չինաստանն իր սահմաններից դուրս առաջին ռազմաբազան հիմնեց (Ջիբութի), Պեկինը սկսել է աւելի ներառական մօտեցում դրսեւորել՝ հմտօրէն կիրառելով դիւանագիտական, լաբբիստական եւ այլ գործիքներ:

Վիշապն արթնացել է:

Փաստացի այսօր ձեւաւորւում է մի աշխարհաքաղաքական առանցք, որի ներքոյ Չինաստանը փորձելու է կեանքի կոչել «Մեծ Եւրասիա» նախագիծը: Վերջինիս առանցքային մեգատարածաշրջաններից է Մերձաւոր Արեւելքը, որի համար պայքարում Պեկինն առայժմ յաղթում է:

Գանք Հայաստան:

Ակադեմիական աշխարհաքաղաքականութիւնից քիչ թէ շատ հասկացող իւրաքանչիւր ոք կը հաստատի, որ Մերձաւոր Արեւելքն ու Հարաւային Կովկասն օրգանապէս կապուած տարածաշրջաններ են, ինչը յատկապէս ընդգծւում է իրանական գործօնի լոյսի ներքոյ:

Չինաստանի ակտիւացումը Մերձաւոր Արեւելքում, որն իրականցւում է Իրանի հետ ռազմավարական երկխօսութեան խորացման պրիզմայի միջով, լուրջ հէնք է ստեղծում նաեւ հարաւկովկասեան ուղղութեամբ նոյն չինական ներառականութեան համար:

Պեկինի աշխարհաքաղաքական սխեմաներում Իրանը դիտւում է նաեւ որպէս Հարաւային Կովասում չինական շահերի անուղղակի առաջխաղացման դերակատար: Արդիւնքում երկու կողմերն էլ բաւարարուած կը լինեն. Թեհրանը կը ստանայ ելք դէպի Սեւ ծով ու կամրապնդի որպէս տարածաշրջանային գերտէրութիւն, Չինաստանն էլ հնարաւորութիւն կը ստանայ նւազեցնելու այս ուղղութեամբ Հնդկաստանի աճող ազդեցութիւնը՝ ներառելով նոր ձեւաւորուող տրանսպորտային հաղորդակցութիւնները «Գօտի եւ ճանապարհ» նախաձեռնութեան մէջ:

Այսպիսի կոնֆիգուրացիայի պայմաններում Հայաստանի համար առանցքային արտաքին ու անվրտանգային մարտահրաւէր պէտք է հանդիսանայ Իրանի ու Չինաստանի հետ դիւանագիտական, տնտեսական, մշակութային եւ այլ ուղղութիւններով ռազմավարական երկխօսութեան խորացումը:

Թէեւ աւելի ճիշտ կը լինէր խօսել նշուած երկրների հետ ոչ թէ երկխօսութեան խորացման, այլ առայժմ գոնէ վերականգնման մասին՝ հաշւի առնելով 2020-ին Հայաստանի միացումը իրենից հակաչինական նախաձեռնութիւն ներկայացնող կրօնական ազատութիւնների ալեանսին, ինչպէս նաեւ Իրանի հետ գրեթէ բոլոր առանցքային նախագծերի փաստացի սառեցումը:

# Բլինքէնի զանգն Ալիեւին, ԱՄՆ շտապողականութիւնն ու Հարաւային Կովկասից չհեռանալու ՌԴ որոշումը. ինչո՞ւ է Բլինքէնը զանգահարել Ալիեւին



*ԱՄՆ երկու փոխպետքարտուղարների գրեթէ միաժամանակ Երեւան կատարած այցերից յետոյ յայտնի դարձաւ, որ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքէնը զանգահարել է Իլհամ Ալիեւին: Պետդեպարտամենտի փոխանցմամբ, Բլինքէնը շեշտել է խաղաղութեան համաձայնագրի ուղղութեամբ Հայաստանի եւ Ադրբեջանի շարունակական առաջընթացը եւ ընդգծել համաձայնագրի անյապաղ կնքման կարեւորութիւնը՝ վերահաստատելով այդ ուղղութեամբ ԱՄՆ աջակցութիւնը:*

*Ադրբեջանի նախագահի գրասենեակն իր հերթին հաղորդել է, որ խաղաղութեան օրակարգն առաջ մղելու տեսանկիւնից Ալիեւն ընդգծել է «Հայաստանում Սահմանադրութեան, համապատասխան օրէնքների եւ ներքին նորմատիւ իրաւական ակտերի հիման վրայ Ադրբեջանի դէմ տարածքային պահանջներին վերջ տալու կարեւորութիւնը»:*

*Ադրբեջանի նախագահը նաեւ ասել է, որ «ժամանակն է պաշտօնապէս դադարեցնելու ԵԱՀԿ Մինսկի խմբի եւ դրան առնչուող բոլոր կառոյցների գործունէութիւնը, որպէսզի ամբողջութեամբ փակւի անցեալի մնացորդ հակամարտութեան գէջը»:*

*Սրան զուգահեռ՝ ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյեանը յայտարարել է. «Մենք շատ կառուցողական առաջարկներ ենք ուղարկել ադրբեջանական կողմին, եւ պատրաստ ենք դրանք վերջնական տեսքի բերել եւ պայմանագիրը կնքել առաջիկայ ամսուայ ընթացքում, ինչպէս արդէն առաջարկել ենք: Ցաւօք, մինչ օրս այդ առաջարկին ադրբեջանական կողմից պատասխան չենք ստացել: Աւելին, Ադրբեջանն առաջ է քաշում նոր խնդիրներ, ինչն առնւազն հարցեր է առաջացնում մեր եւ աւելի լայն տարածաշրջանում խաղաղութեան վերջնական նպատակի հարցում նրանց անկեղծութեան վերաբերեալ»:*

*Գնահատելով ԱՄՆ ակտիւութիւնը վերջին երկու շաբաթների ընթացքում Հարաւային Կովկասում, ռուս քաղաքական վերլուծաբան Ստանիսլաւ Տարասովն ասաց, որ փոխպետքարտուղարների այցն ու Բլինքէնի զանգն Ալիեւին իսկապէս պէտք է դիտարկել մէկ փաթեթի մէջ, քանի որ ԱՄՆ-ը ցանկանում է ամէն կերպ մասնակիցը դառնալ գործընթացին, ձեռք բերել գերակայ ազդեցութիւն ռեգիոնում՝ այն վերածելով հակառուսական գօտու:*

*«Կողմերը մօտենում են ստորագրմանը, եւ ԱՄՆ-ը անհանգստանում է, փորձում է իր մասնաբաժինն ունենալ այս գործընթացում, հետագայում ստանալով նաեւ ազդեցութիւն ապաշրջափակւելիք ճանապարհների նկատմամբ, որոնց մասին բաց տեքստով խօսում է ԱՄՆ Պետքարտուղարութիւնը»,- 168.am-ի հետ զրոյցում ասաց Տարասովը:*

*Նա յիշեցրեց փոխպետքարտուղար Օ՛Բրայէնի այն յայտարարութիւնը ՀՀ-ում, որ ԱՄՆ-ը ոգեւորում է. Միացեալ Նահանգները խրախուսում է Ադրբեջանին եւ Հայաստանին աւարտին հասցնել խաղաղ համաձայնագիրը առաջիկայ շաբաթների ընթացքում եւ անընդունելի է համարում մանեւրները կողմերից համաձայնութեան հասնելու համար:*

*«Օ՛Բրայէնը կոչ էր արել նոր պահանջներ ներկայացնելու քաղաքականութիւնը, ինչը, կարծում եմ՝ ինչ-որ տեղ ուղղուած էր նաեւ երկու կողմերին, քանի որ նա նաեւ խօսել էր ապաշրջափակման մասին՝ ասելով, որ Կենտրոնական Ասիայից դէպի Միջերկրական ծով առեւտրային ուղի կառուցելու համար պատմական հնարաւորութիւն է ստեղծւել, որը տեղի կունենայ այն դէպքում, եթէ խաղաղութիւն լինի Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ:*

*Ի դէպ, այս ճանապարհը, որը ներառում է նաեւ Զանգեզուրի ճանապարհը կամ միջանցքը, դիտարկւում է՝ որպէս Ռուսաստանի ու Իրանի ազդեցութեան դէմ պրոյեկտ: Հէնց դա էր պատճառը, որ ԱՄՆ-ը, Բրիտանիան ամէն կերպ աշխատեցին, որպէսզի Ադրբեջանը Նախիջեւանին կապող իրանական երթուղին չգործարկւի, նման ուղիղ յայտարարութիւններ էր արել նոյն Օ՛Բրայէնը: Կարծում եմ՝ դա շատ էական է հասկանալու համար ԱՄՆ շահերն ու դրանցից բխող քայլերը»,- ասաց վերլուծաբանը:*

*Ըստ Տարասովի՝ ներկայումս ԱՄՆ-ն ուղիղ մասնակցութիւն չունի հայ-ադրբեջանական բանակցութիւններին:*

*«Թէեւ ես այն համոզմանն եմ, որ ՀՀ բոլոր առանցքային քայլերը, այդ թւում՝ յայտարարութիւնը, որ համաձայնագիրը կարող է ստորագրւել առաջիկայ մէկ ամսուայ եւ առաջիկայ շաբաթների ընթացքում, քննարկւած է ամերիկեան կողմի հետ: Ըստ էութեան, օրերս Երեւանում նոյնպիսի յայտարարութիւն արեց նաեւ ԱՄՆ պետքարտուղարի օգնականը: Ուստի Երեւանի միջոցով կայ մասնակցութիւն գործընթացին անուղղակի կերպով, սակայն ԱՄՆ-ին աւելին է հարկաւոր, որի համար, կարծում եմ՝ Բլինքէնը զանգահարեց Ալիեւին եւ փորձեց հաւասարակշռել ԱՄՆ ջանքերը եւ ակտիւութիւնը կողմերի նկատմամբ, քանի որ Հայաստանին խոստացել են ռազմավարական գործընկերութիւն, սա, բնականաբար, խնդիր է դիտարկւում Ադրբեջանից, որի համար հարկաւոր է գործընթաց Ադրբեջանի ուղղութեամբ: Պէտք է նշել, որ ԱՄՆ-ի քայլերում որոշակի շտապողականութիւն կայ, պայմանաւորւած ԱՄՆ նախագահական ընտրութիւններով»,- տեղի ունեցողն այսպէս բացատրեց վերլուծաբանը:*

*Տարասովը չի գտնում, թէ կոչն Ադրբեջանին՝ անյապաղ խաղաղութեան համաձայնագիր ստորագրելու մասին, առանցքային է:*

*«Առանցքայինը խօսակցութիւնը ստորագրման եւ առկայ խնդիրների մասին է: Առանցքայինը Հայաստանի ուղղութեամբ ակտիւութիւնից յետոյ զանգն է Ադրբեջան՝ փարատելու համար Բաքւի մտահոգութիւնները: Կընդունե՞ն արդեօք դրանք՝ չեմ կարող ասել, բայց Ադրբեջանը որոշակի անկախութիւն է պահպանում Արեւմուտքից եւ Արեւմուտքի հետ համագործակցում է, երբ յստակ պատկերացում ունի, որ ակնկալիքները կը բաւարարւեն: Ուստի հեռախօսազրոյցի վերաբերեալ ադրբեջանական կողմի տարածած հաղորդագրութիւնում շեշտը, որ Ադրբեջանն է կազմել համաձայնագրի տեքստը, Ադրբեջանն է խաղաղութիւն հաստատել, թոյլ է տալիս ենթադրել, որ դրանով Ադրբեջանը հաստատում է իր, կարելի է անգամ ասել, երաշխաւորի դերակատարութիւնը ռեգիոնում: Ուստի չեմ կարծում, որ համաձայնագիրը կարող է շատ մօտ ապագայում քննարկւել, սակայն ԱՄՆ-ը ցանկանում է դրանց մասնակցել, քանի որ առջեւում ապաշրջափակման բանակցութիւններն են»,- ասաց նա:*

*Տարասովը նաեւ կարեւոր համարեց ռուսական կողմի այն յայտարարութիւնը, որ ցանկութիւն կայ բացելու գլխաւոր հիւպատոսութիւն Սիւնիքում մինչեւ տարեվերջ:*

*«Նման հիւպատոսութիւն Սիւնիքում ունի նաեւ Իրանը: ՌԴ-ն ցանկանում է բացել հիւպատոսարան ինչպէս Սիւնիքում, այնպէս էլ Ղարաբաղում: Կարծում եմ՝ սրանք ՌԴ-ի կողմից առանցքային որոշումներն են, որոնք արտացոլում են ՌԴ հետաքրքրութիւնները եւ ռեգիոնից չհեռանալու որոշումը»,- նկատեց վերլուծաբանը:*

Դենիս Դենիսով.

## «ԵՄ-ին անդամակցելու դիմաց կազմակերպութիւնը Հայաստանից կը պահանջի մի շարք պայմաններ»



*«ԱԼԻՔ» - Քաղաքագէտ, ՌԴ կառավարութեանն առընթեր Ֆինանսական համալսարանի փորձագէտ Դենիս Դենիսովը Alpha News-ի հետ զրոյցում անդրադարձել է Հայաստանի եւրաինտեգրման հաւանականութեանն ու դրան Ռուսաստանի արձագանգին:*

*Փորձագէտի կարծիքով՝ անհրաժեշտ է հաշւի առնել, որ ԵՄ-ին անդամակցելու դիմաց կազմակերպութիւնը կը պահանջի կատարել արժէքային կողմնորոշումների հետ կապւած մի շարք պայմաններ:*

*«Հայաստանի եւրաինտեգրման գործընթացն աստիճանաբար իրականացւում է: Չասեմ, որ ինտենսիւ տեմպերով, բայց միեւնոյն ժամանակ մենք գիտենք Հայաստանի ներկայիս քաղաքական էլիտայի առանցքային դէմքերի, Հայաստանի ղեկավարութեան դիրքորոշումը, որոնք բազմիցս յայտարարել են, որ ՀՀ-ի միակ այլընտրանքային ապագան ինտեգրումն է եւրոպական կառոյցներին:*

*Սակայն, դրա հետ մէկտեղ, հարկ կը լինի կենտրոնանալ նաեւ Հայաստանի բնակչութեան կարծիքի վրայ, որը լիովին ճիշտ չի համարում Հայաստանի՝ ԵՄ կառոյցին ինտեգրւելու որոշումը: Կարելի է օրինակ բերել Եւրոմիութեանն ինտեգրման նմանատիպ գործընթացները, որոնք շարունակւում են աւելի քան 30 տարի:*

*Եւ այնտեղ ոչ թէ առաջընթաց չկայ, այլ նոյնիսկ երբեմն յետընթաց է նկատւում: Դա նոյնիսկ կախւած չէ պետութեան եւ բնակչութեան ղեկավարների դիրքորոշումից, այլ աւելի շուտ Եւրոպական Եւրոմիութեան իրավիճակից:*

*Հարկ է նշել, որ ԵՄ-ին անդամակցելու դիմաց կազմակերպութիւնը կը պահանջի արժէքային կողմնորոշումների հետ կապւած մի շարք պայմանների կատարում: Փորձից կարելի է ասել, որ նման գործընթացներում բնակչութեան հետ ղեկավարութիւնը հիմնականում պարզապէս չի խորհրդակցում եւ հաշւի չի նստում նրանց հետ: Ուստի քաղաքական վերնախաւը կարող է դա անել նման պահանջների դէմ բողոքի ակցիաներին զուգահեռ:*

*Բնականաբար, այս գործողութիւններին կը յաջորդի ռուսական արձագանգը: Կախւած ԵՄ-ին Հայաստանի այդ ինտեգրման կոնկրետ քայլերից, անպայման կը լինեն սիմետրիկ քայլեր ՌԴ-ի կողմից, որոնք բխելու են Ռուսաստանի ազգային շահերի եւ ազգային անվտանգութեան հարցերից: Ենթադրել, որ նման գործընթացները ոչ մի կերպ չեն ազդի յարաբերութիւնների վրայ, միամտութիւն է: Իհարկէ, պետութիւնների մակարդակով յարաբերութիւնները կը վատթարանան»,- ասել է Դենիսովը:*

*Միաժամանակ, ըստ նրա, բնական է, որ Մոսկւայում կը ցանկանային՝ Հայաստանը լիարժէք մասնակից լինէր ՀԱՊԿ-ին: «Վերջին շրջանում ինձ մօտ յստակ զգացում է հայկական քաղաքականութեան երկակիութիւնը, յատկապէս արտաքին ուղւագծում: Ըստ երեւոյթին, Հայաստանի ներկայիս քաղաքական էլիտան այլ կերպ պարզապէս չի կարող: Եւ ահա դրա հետ դեռ պէտք է համակերպւել, այդ թւում՝ Ռուսաստանի»,- ընդգծել է Դենիսովը:*

*Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Հայաստանը Ֆրանսիայի հետ պայմանագիր է կնքել «Սեզար» հրետանային համակարգերի ձեռքբերման համար, փորձագէտը նշել է, որ իրականում դա Հայաստանին ոչ մի կերպ չի օգնի:*

*«Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ վերջերս կնքւած գործարքը, ըստ էութեան, չի կարող փոխել աշխարհաքաղաքական իրավիճակը տարածաշրջանում եւ լրջօրէն ազդել որեւէ բանի վրայ: Ռուսաստանի եւ Ֆրանսիայի, Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւնների շատ լուրջ սառեցման ներկայ կոնիւնկտուրայում սա զուտ խորհրդանշական ժեստ է, որը ցոյց է տալիս տարածաշրջանում եւ, մասնաւորապէս Հայաստանում ամրապնդւելու Ֆրանսիայի ցանկութիւնը: Իսկ պաշտօնական Երեւանի մտադրութիւնը՝ շարունակելու եւրատլանտեան ինտեգրմանն ուղղւած ջանքերը»,- ասել է Դենիսովը:*

# Իրանահայ մարզիկ Մայիս Թորոսեանը՝ «Դայմոնդ քափ» համաշխարհային մրցաշարի ախոյեան



*Մարմնամարզութեան (բադիբիլդինգ) մարզաձեւի մարզիկ՝ Մայիս Թորոսեանը, մայիսի 25 եւ 26-ին, Հայաստանում մասնակցելով «Դայմոնդ քափ» անուան համաշխարհային մրցաշարին, 80 կգ. քաշային կարգում նուաճել է առաջին պատուաւոր տեղը եւ արժանացել ոսկէ մեդալի: Նա մասնակցել է նաեւ նոյն մրցաշարի վետերանական (վաստակաւորներ) բաժնի ազատ քաշային կարգի մրցոյթին, որտեղ հանդիսացել է երկրորդ եւ արժանացել արծաթէ մեդալի:*

*Մայիսը ծնուել է 1983 թուականին, Շահինշահրում: Երկար տարիներ է, ինչ աշխատում է, որպէս մարմնամարզիկ եւ այժմ «Նամջու» մարզասրահի տնօրէնն է: Նշելի է, որ Մայիս Թորոսեանը 2016, 2017, 2018 եւ 2022 թուականներին նոյնպէս մասնակցել է այս մրցաշարին, որոնց բոլորի արդիւնքում յաղթական է եղել՝ ձեռք բերելով երկու ոսկէ եւ երկու արծաթ մեդալներ:*

*Շնորհաւորելով Մայիս Թորոսեանին իր այս ձեռքբերումի առթիւ՝ մաղթում ենք նրան նորանոր յաջողութիւններ կեանքի բոլոր ասպարէզներում:*

**Թղթակից (Նոր Ջուղա)**






# Ատրպատականի առաջնորդարանի այգու բացումը ամառային եղանակի համար







***Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թաւրիզ-*** *Կիրակի, յունիսի 16-ին, երեկոյեան ժամը 6-ին, պաշտօնական բացումը կատարեց Ատրպատականի հայոց թեմի ազգային առաջնորդարանի «Կենտրոնականի այգի»-ին, Թեմի առաջնորդ՝ Տ. Գրիգոր արք. Չիֆթճեանի եւ Թեմական խորհրդի հովանաւորութեամբ: Ըստ սովորութեան, իւրաքանչիւր տարի թաւրիզահայ միութիւններից մէկը ստանձնում է բացման հանդիսութեան կազմակերպումը: Այս ամառ, սոյն աշխատանքը իր ուսերին վերցրեց «Համազասպ Ոսկանեան» սրահի տնօրէն Գրիգոր Բահադորեանը եւ հրամցրեց համեղ ճաշատեսակներ. իսկ սլաքախաղի եւ վիճակախաղի կազմակերպումը յանձն էր առել Թաւրիզի հայ համալսարանականների միութիւնը:*

*«Համազասպ Ոսկանեան» սրահի մուտքին յարդարուած ընթրիքի սեղանների շուրջ նստել էին Թեմական խորհրդի եւ Պատգամաւորական ժողովի ներկայացուցիչ անդամները եւ Թաւրիզի հոգեւոր հովիւը, որը օրհնեց սեղանները:*

*Մինչեւ ուշ գիշեր տեւած բացման հանդիսութիւնը ազդանշանը տուեց, ամէն օր մեծ բազմութեամբ ներկայ գտնուելը ազգային առաջնորդարանի այգում, վայելելու համար ամռան օրերը, սոյն այգու ծառախիտ միջավայրում:*

# Հ.Մ.Ա.Կ.-ի Թաւրիզի մասնաճիւղի վարչութեան հանդիպումները Թեհրանում









***Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թաւրիզ-*** *Շաբաթ, յունիսի 15-ին, Հ.Մ.Ա.Կ.-ի Թաւրիզի մասնաճիւղի վարչութեան նախագահ Նժդիկ Աբրահամեանը, վարչութեան անդամ Վահիկ Բաղդասարեանը եւ սոյն մասնաճիւղի բազմամեայ անդամ եւ Ատրպատականի հայոց թեմի Թեմական խորհրդի ներկայ կազմի անդամ Հենրիկ Աբրահամեանը Թեհրան մեկնեցին եւ հանդիպեցին Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր դոկտ. Արա Շահվերդեանի հետ:*

*Հանդիպման ընթացքում տեղի ունեցաւ մտքերի փոխանակում եւ խօսուեց երկրի, համայնքային եւ ազգային հարցերի շուրջ: Մասնաճիւղի վարչութիւնը իր գնահատանքն ու երախտագիտութիւնը յայտնեց պատգամաւորին, խորհրդարանում կատարած 4-ամեայ աշխատանքների համար ու նաեւ յաջողութիւն մաղթեց նրան, վերընտրուելու առիթով:*

*Սոյն հանդիպումից յետոյ վարչութիւնը այցելեց յայտնի գործարար եւ ծագումով թաւրիզեցի Սմբատ Յակոբեանի գրասենեակ եւ մասնաճիւղի վարչութեան կողմից նախատեսուած յատուկ յուշանուէրը յանձնուեց պրն. Յակոբեանին առ ի երախտագիտութիւն եւ շնորհակալութիւն՝ Թաւրիզի մասնաճիւղի մասնակցութեան նիւթականը հովանաւորելու, 2023-ին Հայաստանի Համահայկական խաղերին: Նրանք Թեմական խորհրդի եւ «Արարատ»-ի Թաւրիզի մասնաճիւղի վարչութեան անունից ցաւակցութիւն յայտնեցին նաեւ նրա եղբօր կնոջ՝ հանգուցեալ Մարինա Աղաջանեան-Յակոբեանի ցաւալի մահուան առիթով:*

*Նոյն օրը երեկոյեան, Թեհրանի «Արարատ» մարզաւանում Կենտրոնական վարչութեան հետ հանդիպում տեղի ունեցաւ, նախագահութեամբ Կազմակերպութեան նախագահուհի Սոֆի Ջաղարբէգեանի: Թաւրիզի մասնաճիւղի նախագահ Նժդիկ Աբրահամեանը զեկուցեց շրջանի ընթացքում կատարուած աշխատանքների, առկայ մտահոգութիւնների եւ մի շարք դժուարութիւնների մասին:*

*Հանդիպման ներկայ գտնուեց Հ.Մ.Ա.Կ.-ի հիմնադրման 80-ամեակի յանձնախմբի նախագահ Հենրիկ Խալոյեանը եւ խօսուեց Միջմասնաճիւղային խաղերի ծրագրաւորման աշխատանքների ուղղութեամբ եւ քննարկուեցին հնարաւոր միասնական աշխատանքների նախագծերը:*

Վիտալի Մանգասարեան.

# «Ադրբեջանից եւ Թուրքիայից եկող վտանգները չեն չէզոքացել. գործողութիւններ կարող են լինել բոլոր հնարաւոր ուղղութիւններում»



Վերջին օրերին Նիկոլ Փաշինեանը Սիւնիքում էր, որտեղ համոզում էր, որ սահմանազատման եւ սահմանագծման իրենց սկսած գործընթացը, կամ՝ Ոսկեպարում տեղադրուած ինժեներական պատնէշները կարող են անվտանգութեան երաշխիք լինեն, եւ որ պէտք է հետեւութիւն անել անցած ճանապարհից, անցած 30 տարուց եւ հարեւանների հետ համակեցութեան եզրեր գտնել, չթշնամանալ եւ չտրուել թշնամացման ընդդիմադիրների փորձերին: Սրան զուգահեռ ՀՀ արտաքին գործերի նախարարութիւնը, պատասխանելով Ադրբեջանի՝ ֆրանսիական սպառազինութեան ձեռքբերման հետ կապուած պաշտօնական Բաքւի պահանջ-դժգոհութեանը, մասնաւորապէս, նշել էր. «Ամէն առիթով տարածաշրջանային սրացումներ կանխատեսելու Ադրբեջանի գործելակերպը մտածելու տեղիք է տալիս եւ գալիս է հիմնաւորելու մի շարք կենտրոնների կողմից արւող վերլուծութիւնները, թէ Ադրբեջանն ամէն ինչ անելու է վիժեցնելու Հայաստանի հետ խաղաղութեան համաձայնագիր կնքելու գործընթացը, 2024 թ. նոյեմբերին Բաքւում կայանալիք COP29 գագաթնաժողովից յետոյ Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ նոր ագրեսիա ձեռնարկելու համար»:

Բացի այս, ՀՀ պաշտպանութեան նախարարութիւնը, ինչպէս արդէն նշեցինք, զուտ պաշտպանողական սպառազինութիւն չի գնում եւ երբեմն զօրավարժութիւնների մասին հաղորդագրութիւններում ակնարկում կամ նշում յարձակողական դրւագների խաղարկման մասին:

Այս ամենից ելնելով՝ Ադրբեջանից եւ Թուրքիայից ի՞նչ գործողութիւններ սպասել, ե՞րբ եւ ո՞ր ուղղութեամբ, եւ երկրորդ՝ արդեօ՞ք անվտանգային հարցերում կարող են տարաձայնութիւններ լինել Նիկոլ Փաշինեանի եւ իր թիմակիցների միջեւ:

Այս թեմաների շուրջ 168.am-ը զրուցել է «Յենակէտ» վերլուծական կենտրոնի ղեկավար, ռազմական փորձագէտ Վիտալի Մանգասարեանի հետ:

- Չեմ կարծում, որ Փաշինեանի եւ իր թիմակիցների միջեւ լուրջ տարաձայնութիւններ կան, աւելի շուտ կասէի, որ շատ դէպքերում զուտ տարաձայնութիւն լինելու իմիտացիա է ստեղծւում: Այսքան ժամանակ չի եղել որեւէ դէպք, երբ Փաշինեանի թիմակիցները հակառակուեն նրան, դրա յետեւից մինչեւ վերջ գնան եւ առաւելեւս՝ յաջողեն:

Շատ դէպքերում Փաշինեանն ինքն է, այսպէս ասած, «փուռը» տւել իր թիմակիցներին եւ բոլոր դէպքերում մարսել է այդ ամէնը: Փաստերը քիչ չեն:

Իսկ Ադրբեջանից եւ Թուրքիայից եկող վտանգները չեն չէզոքացել, աւելին՝ Արցախի ՊԲ կորուստից յետոյ այդ վտանգներն է՛լ աւելի են մեծացել: Եթէ մինչ այդ ՀՀ-ի հանդէպ լայնածաւալ գործողութիւններ սկսելուց առաջ ադրբեջանական կողմին անհանգստացնում էր, որ իր, այսպէս ասած, թիկունքում մարտունակ, խնդիր լուծող ռազմական միաւոր կար՝ ի դէմս ՊԲ-ի, ապա այս փուլում այդ վտանգն Ադրբեջանի համար այլեւս չկայ, եւ, բնականաբար, նրանց ձեռքերն էլ աւելի են երկարացնելու:

Ինչը վերաբերում է գործողութիւնների հնարաւոր ուղղութիւններին, ապա, ցաւօք սրտի, Տաւուշի պաշտպանական բնագծերի յանձնումից յետոյ մենք բոլոր ուղղութիւններում էլ լուրջ խնդիրներ ենք ունենում: Եւ այդ ամէնը հաշւի առնելով՝ հակառակորդը գործողութիւնների կարող է գնալ բոլոր հնարաւոր ուղղութիւններում:

Նիկոլ Փաշինեանի խաղաղութեան թէզի հաւաստիացումները ժամանակի ընթացքում հէնց իր եւ իր թիմակիցների կողմից են հերքւում: Աւածի վառ ապացոյցներից մէկը ՀՀ ԱԳՆ-ի տարածած վերջին յայտարարութիւնն էր, որտեղ զգուշացնում են մօտալուտ պատերազմի մասին:

Պաշտպանութեան նախարարութեան զօրավարժութեան համատեքստում ձեր նշած ակնարկներին, կարծում եմ, որ իրականացւող գործողութիւնները բաւարար չեն: Որպէսզի կարողանանք դիմակայել սպասւող մարտահրաւէրներին գոնէ արժի, որ պաշտպանութեան նախարարութիւնը փորձի լոկոմոտիւի դեր ստանձնել, այն է՝ բարձրացնի զինուած ուժերի մարտական պատրաստուածութեան աստիճանը, վերականգնի բարոյահոգեբանական վիճակը, դրան զուգահեռ նաեւ հասարակութեան ինքնագնահատականի բարձրացման հարցը ուշադրութեան կենտրոնում պահի:

**- Արդէն նշեցիք՝ ինչ պէտք է անի պաշտպանական գերատեսչութիւնը, ամէն դէպքում, այսօր կարո՞ղ ենք ասել, որ բանակը պատրաստւում է պատերազմի: Այլ կերպ՝ միայն սպառազինութեան գնման պայմանագրերի կնքումը, մասնաւորապէս վերջինը KNDS ֆրանսիական ռազմարդիւնաբերական ընկերութեան հետ, ինչը դժգոհութեան ալիք բարձրաձրեց ադրբեջանական եւ ռուսական կողմում, բաւարար հիմք է նման եզրակացութիւն անելու համար:**

- Եթէ ադրբեջանական կողմի դժգոհութիւնները տրամաբանական են եւ ինչ-որ տեղ նաեւ սպասելի, ապա ռուսական կողմի դըժգոհութիւններն առնւազն հարցեր են առաջացնում:

Մերօրեայ իրականութեան մէջ զէնքի ձեռքբերումը ոչ միայն թանկ հաճոյք է, այլ նաեւ շատ դէպքերում նաեւ անհնարին: Եւ Հայաստանը պէտք է կարողանայ աշխատել զէնք վաճառող բոլոր երկրների հետ: Միւս կողմից, միայն զէնք գնելը բաւարար չէ, անհրաժեշտ է նաեւ համակարգային մօտեցում՝ սկսած այդ զէնքերի սպասարկումից, մեր ԶՈՒ-ի ինտեգրումից, վերջացրած այդ զէնքերի վրայ ՄՈԲ ռեսուրսի ուսուցանումից:

Ցաւօք, այդ ամէնը բաւարար արագութեամբ տեղի չի ունենում, եւ ասել, որ այս փուլում մեր պետութիւնը պատրաստւում է պատերազմի, մեղմ ասած, տեղին չէ:

**- Անուղղակի կերպով լոգիստիկ խնդիրների թեմա շօշափեցիք, հիմա Նիկոլ Փաշինեանն ասում է, որ հարեւանների հետ պէտք է լաւ յարաբերութիւններ ունենալ՝ հաշւի առնել նրանց շահերը, տրամադրութիւնները: Աւելին, նա մի ժամանակ ասում էր, թէ պէտք է հաշւի առնենք, որ Վրաստանը ԵՄ տարածք է, այսօր այդ երկիրը խնդիրներ ունի ԵՄ-ի հետ: Սրանից բացի, Իրանը չի ողջունում ՀՀ արեւմըտեան ծրագրերը, հետւին մտքերը, մինչդեռ Վրաստանը եւ Իրանը կարեւոր ճանապարհ են գնւած զէնքի տեղափոխումն ապահովելու հարցում:**

- Ինչպէս վերեւում արդէն նշեցինք, Նիկոլ Փաշինեանը մի կողմից յայտարարում է, որ հարեւանների հետ պէտք է լաւ յարաբերութիւններ ունենալ, միւս կողմից՝ նոր թշնամիներ է ձեռք բերում: Արդեօ՞ք ՀՀ շահերից է բխում այս դժւարին իրավիճակում նոր հակառակորդներ եւ թշնամիներ ունենալ: Այս փուլում յատկապէս Իրանի հետ մեր շահերը խաչւում են, եւ պէտք է այն հնարաւորինս արդիւնաւէտ օգտագործել, եւ իսկապէս անկեղծ ու վստահելի յարաբերութիւններ կառուցել, ոչ թէ բարեկամութեան իմիտացիա անել:

Մենք իրաւունք չունենք մեզ նման ճոխութիւն թոյլ տալու, մեր բարեկամների թիւը աւելացնելու փոխարէն՝ նւազեցնելու: Դա չափազանց բարդ եւ վտանգաւոր հարց է, եւ պէտք է զերծ մնալ «վայրի» լուծումներից:

**– Ի դէպ, ՀՀ ԶՈՒ ղեկավարութիւնն ասում է, որ ՆԱՏՕ-ի, ԱՄՆ-ի, արեւմտեան երկրների հետ համագործակցութեան շնորհիւ ՀՀ բանակը կերպափոխւում է, բայց երբ քննում ենք ծրագրերը, դրանք խորհրդատւական բնոյթ են կրում, կամ՝ պաշտպանական քաղաքականութեանն ու կրթութեանն են վերաբերում: Այո, դրանք կարող են ազդել կերպափոխման, կերպարանափոխման վրայ, միւս կողմից՝ այսօրինակ համագործակցութիւնը նորութիւն չէ, մեծ հաշւով: Իսկ Ադրբեջանը բռնեց թուրքական մոդելի բանակ ունենալու ճանապարհը, եւ դա նկատելի է: Որքանո՞վ է մեր բանակի այս կերպափոխումը, բարեփոխումները համահունչ Ադրբեջանի զինուած ուժերում տեղի ունեցողին:**

- Բանակի կերպարանափոխումը պէտք է նկատելի լինի: Ի՞նչն է փոխւել, մեր անվտանգութի՞ւնն է մեծացել, մարտունակութեան աստիճա՞նն է անզամներով բարձրացել, շաբաթը մէկ զօրավարժութիւն ենք իրականացնո՞ւմ, որպէսզի դիմակայենք մարտահրաւէրներին… Բանակում շատ գործ կայ անելու, եւ պէտք է ինտենսիւ աշխատել, ոչ թէ ականջահաճոյ յայտարարութիւններ անել: Կերպարանափոխման, կերպափոխման տրամաբանութեան մէջ շատ է խօսւում ատեստացիայի մասին, սակայն մինչեւ հիմա այդ գործընթացի կազմակերպման մէջ բազմաթիւ խնդիրներ կան: Մարդիկ ամիսներով սպասում են, մինչեւ իրենց ատեստաւորման հերթը հասնի:

**- Անվտանգային հարցերի համատեքստում չանտեսենք ՀԱՊԿ-Հայաստան, ՌԴ-Հայաստան յարաբերութիւնները: Փաշինեանը ժամանակ առ ժամանակ մեղադրանքներ է հնչեցնում ՀԱՊԿ-ի հասցէին, բայց այսօր Ռուսաստանի Դաշնութեան արտաքին գործերի նախարար Սերգէյ Լաւրովը յայտարարել է, որ ՀԱՊԿ-ից դուրս գալու վերաբերեալ Երեւանը պաշտօնական դիմումներ չի ուղարկել, հետեւաբար՝ այդ հարցը եւ հանրապետութեան դուրս գալու հնարաւոր հետեւանքները ՀԱՊԿ արտաքին գործերի նախարարների խորհրդի նիստում չեն քննարկուել: Աւելի վաղ Ադրբեջանի ԱԳ նախկին նախարար Թոֆիկ Զուլֆուգարովն ակնարկել էր, թէ այստեղ քարոզչական տարր կայ՝ յիշեցնելով Հայաստան-ՌԴ ռազմական պայմանագրերը եւ այլն:**

- Հայաստան-ՀԱՊԿ եւ Հայաստան-ՌԴ յարաբերութիւնները, կարելի է ասել, պատմական անկում են գրանցել, եւ այստեղ մի քանի օբիեկտիւ պատճառներ կան:

Առաջին, հայաստանեան հասարակութեան շրջանում ձեւաւորուած ակնկալիքներ կային ՌԴ-ից, յատկապէս 44-օրեայ պատերազմից յետոյ, երբ ՌԴ խաղաղապահները տեղակայուեցին Արցախում:

Երկրորդ, ՀՀ-ում գործող ռազմաքաղաքական ղեկավարութիւնը վերջին տարիներին, մեղմ ասած, չէր ցանկանում յարաբերութիւնները բարելաւելուն միտուած քայլեր իրականացնել, եւ իրականացուած քայլերի մեծ մասն էլ, իմ կարծիքով, զուտ իմիտացիա էր: Եւ տպաւորութիւն ունեմ, որ անկախ երկուստեք իրար հանդէպ հնչող մեղադրանքներից, ստեղծուած իրավիճակը ձեռնտու է թէ՛ հայկական կողմին, թէ՛ ռուսական:

Նիկոլ Փաշինեանը յայտարարում էր, որ դեռեւս 2018 թւականին էր պէտք Արցախը ճանաչել Ադրբեջանի կազմում, իսկ ռուսական կողմը զուգահեռ իր գազն Ադրբեջանի միջոցով վաճառում է: Ինչպէս ասում են՝ բոլորը գոհ ու շնորհակալ են, Ադրբեջանը ստացաւ Արցախն առանց հայերի, Ռուսաստանը ստացաւ հնարաւորութիւն՝ գազ վաճառել Ադրբեջանի միջոցով, իսկ Նիկոլ Փաշինեանն էլ դեռեւս 2018 թւականից ունեցած իր համոզմունքները կեանքի կոչեց՝ ճանաչելով Արցախն Ադրբեջանի մաս: Այլ հարց է՝ այս մօտեցումները բխո՞ւմ են արդեօք ՀՀ պետական եւ անվտանգային շահերից, իմ գնահատմամբ՝ ոչ:

**- Վերադառնանք սահմանազատման գործընթացին, արդեօ՞ք յաջորդ փուլը Սիւնիքում է լինելու, ինչպէս չի բացառում Նիկոլ Փաշինեանը:**

- Նախ արձանագրենք՝ Տաւուշում տեղի ունեցած գործընթացը սահմանազատման պրոցես չէր, քանի որ սահմանազատման դասական սահմանման տրամաբանութեան մէջ չի տեղաւորւում: Այդ պրոցեսն ուղղակի միակողմանի զիջում էր մեր կողմից, ինչի դիմաց հայկական կողմը ոչ մի բան չստացաւ:

Հետեւելով իրադարձութիւնների զարգացումներին եւ ադրբեջանական կողմից հնչող պահանջատիրական յայտարարութիւններին, եւ այդ ամէնը համադրելով նախորդ շրջափուլերում տեղի ունեցածի հետ, դժւար չէ գալ այն եզրայանգման, որ յաջորդիւ, այսպէս կոչւած, սահմանազատման պրոցեսը տեղի է ունենալու այնտեղ, որտեղ կը պարտադրի հակառակորդը: Փաշինեանի մարտավարութիւնը հետեւեալն է՝ տեսնել, թէ ինչ է ուզում հակառակորդը, այնուհետեւ տարբեր ձեւերով փաթեթաւորել այն եւ ներկայացնել՝ որպէս հայկական կողմի մօտեցում: Այդ ճանապարհով բարդ խնդիրների լուծումը ես նորից կորակեմ՝ «վայրի» լուծում, որը ո՛չ բանական մարդու տրամաբանութեան մէջ է տեղաւորւում, ո՛չ էլ միջազգային յարաբերութիւններում նման պրակտիկա կայ:

**- Նիկոլ Փաշինեան-Էրդողան հեռախօսազրոյցից յետոյ ՀՀ ԱԳՆ-ն յայտարարութիւն է տարածել, որտեղ նշւում է, որ ՀՀ-ն ճանաչում է Պաղեստինի պետութիւնը, սրանից յետոյ Հայաստանի դեսպանին կանչել են Իսրայէլի ԱԳՆ: Արդեօ՞ք Իսրայէլը սա չի օգտագործի Ադրբեջանի «ձեռքով»: Յիշենք, որ ժամանակին Իրանի «դէմ դուրս եկանք» եւ Իսրայէլում դեսպանատուն ունենալու որոշում կայացրեցինք:**

- Պաղեստինի պետութեան ճանաչումը ՀՀ-ի կողմից այս փուլում նպատակայարմար չէր, քանի որ իր մէջ լրացուցիչ ռիսկեր է պարունակում: Մենք գիտենք, որ իսրայէլական կողմը տարբեր ձեւերով աջակցում է Ադրբեջանին, եւ 44-օրեայ պատերազմի օրերին մեծ աջակցութիւն է ցուցաբերել՝ է՛ւ զէնքի, է՛ւ մասնագէտների ու փորձի փոխանակման տեսքով: Եւ այս իրավիճակում բոլորից առաջ ընկնել եւ ճանաչել Պաղեստինի պետութիւնը, կարծում եմ, ոչ մի լաւ բանի չի տանի:

Այո, ինչպէս նշեցիք, այս պրոցեսը տեղի ունեցաւ Թուրքիայի նախագահի հետ Փաշինեանի հեռախօսազրոյցից յետոյ: Չգիտեմ՝ որքանով այդ հեռախօսազրոյցը կապ ունի այս որոշման հետ, յամենայնդէպս, մինչ այս պահը տրամաբանական բացատրութիւն պատկան մարմինների կողմից չի տրուել: Կրկնում եմ՝ ինչպէս շատ հարցերում, այս դէպքում եւս առաջ ենք ընկնում եւ մեզ ոչինչ չտւող որոշումներ ենք կայացնում:



«ԱԼԻՔ» - «Այն, ինչ ունի սկիզբ, ունի նաեւ աւարտ»: Այս մասին ըստ Panorama.am-ի՝ Newmag/summerfest-2024-ի շրջանակում ասել է իտալական «Ինտեր»-ի կիսապաշտպան,

## Հենրիխ Մխիթարեան.
# «Ազգային հաւաքականի դուռն ինձ համար փակ է»

Հայաստանի ազգային հաւաքականի նախկին աւագ Հենրիխ Մխիթարեանը՝ պատասխանելով հարցին, թէ արդեօ՞ք Հայաստանի ազգային հաւաքականի էջը համարում է եզրափակուած:

«Աւելի լաւ է աւարտել մէկ քայլ շուտ, քան՝ երկու քայլ ուշ: Աւելի լաւ է այդ որոշումը կայացնես դու, քան՝ ուրիշները: Այս պարագայում կարող եմ ասել՝ իմ ցանկացած որոշումը, որը կայացրել եմ իմ ֆուտբոլային կարիերայի ընթացքում, թէ դրանից դուրս, ոչ մի բանի համար չեմ զղջում:

Գոհ եմ իմ կայացրած որոշումներից, գոհ եմ իմ անցած ճանապարհից: Որոշ մարդիկ հնարաւոր է ասեն՝ կարող էր աւելի լաւ կամ աւելի վատ կարիերա ունենալ, բայց, կարծում եմ, ոչ մէկս մեր ճակատագրից չենք կարող փախչել ոչ աջ, ոչ ձախ: Պէտք է համակերպուենք նրա հետ, ինչ ունենք եւ շնորհակալ լինենք Աստծուն այն ամէնի համար, ինչ նա մեզ տուել է:

Միանշանակ ասեմ, որ, ցաւօք սրտի, ինձ համար հաւաքականի դուռը փակ է»,- ասել է Հենրիխ Մխիթարեանը:

# Գիտնականները պարզել են ԴՆԹ-ում թաքնուած հազւադէպ գենետիկ հիւանդութիւնների մեխանիզմներ



Խաղաղովկիանոսեան հիւսիսարեւմտեան հետազօտական ինստիտուտի (PNRI) եւ համագործակցող հաստատութիւնների հետազօտողները յայտնագործութիւն են կատարել, որը կարող է զգալիօրէն առաջ մղել գենոմային խախտումների մասին մեր ընկալումները:

Նրանց վերջին հետազօտութիւնը, որի արդիւնքները հրապարակուել են Cell Genomics ամսագրում, ցոյց է տալիս, որ ԴՆԹ յատուկ կառոյցները, որոնք կոչւում են ինւերտացուած տրիպլիկացիաներ, նպաստում են տարբեր գենետիկ հիւանդութիւնների զարգացմանը:

Գենոմային խախտումներն առաջանում են այն ժամանակ, երբ ԴՆԹ-ում տեղի են ունենում փոփոխութիւններ կամ մուտացիաներ, որոնք խախտում են նորմալ կենսաբանական ֆունկցիաները: Դա կարող է յանգեցնել առողջական մի շարք խնդիրների, ներառեալ զարգացման ուշացումը եւ նեարդաբանական խանգարումները: ԴՆԹ բարդ մուտացիաների տեսակներից մէկը ներառում է այն կառոյցը, որը յայտնի է որպէս դուպլիկացիա-տրիպլիկացիա/ինւերսիա-պատճէնում (DUP-TRP/INV-DUP):

Այս հետազօտութիւնում դիտարկւում է, թէ ինչպէս են գոյանում այդ բարդ փոփոխութիւնները եւ դրանց ազդեցութիւնը մարդու առողջութեան վրայ: Հետազօտական խումբը, որը գլխաւորել է PNRI-ի հետազօտող Կլաուդիա Քարւալիուն, համագործակցել է լաբորատորիայի գործընկերների՝ Ջէյմզ Լուպսկի լաբորատորիայի հետազօտող Քրիստոֆեր Գրոխովսկու եւ այլ գիտնականների հետ՝ ուսումնասիրելու համար ինւերտացուած տրիպլիկացիա ունեցող 24 մարդու ԴՆԹ-ն:

Նրանք յայտնաբերել են, որ այդ փոփոխութիւնները պայմանաւորուած են նրանով, որ ԴՆԹ հատուածները փոխում են շաբլոնները ռեպարացիայի պրոցեսում: Սովորաբար ԴՆԹ ռեպարացիայի մեխանիզմներն օգտագործում են չվնասուած կոմպլեմենտար շղթան որպէս շաբլոն՝ վնասուած ԴՆԹ-ի ճշգրիտ վերականգնման համար: Սակայն երբեմն ռեպարացիայի ժամանակ ռեպարացիայի մեխանիզմը ոչ միտումնաւոր փոխում է մէկ ուրիշ, բայց նման յաջորդականութեան գենոմի մէկ այլ տեղում:

Այս փոփոխութիւնները տեղի են ունենում ինւերտացուած կրկնութիւնների զոյգերում՝ ԴՆԹ տեղամասերում, որոնք մէկը միւսի հայելային արտացոլումն են: Ինւերտացուած կրկնութիւնները կարող են շեղել վերականգնման մեխանիզմները, ինչը կը յանգեցնի ոչ ճիշտ շաբլոնի օգտագործման եւ կը խախտի գեների նորմալ ֆունկցիան՝ նպաստելով գենետիկ խանգարումներին:

Հետազօտութիւնը ցոյց է տուել, որ այդ շրջուած տրիպլիկացիաները գենոմում առաջ են բերում կառուցուածքային տեսակների զարմանալի բազմազանութիւն, որոնք կարող են յանգեցնել տարբեր հետեւանքների առողջութեան համար:

Այդ փոփոխութիւնները կարող են փոխել որոշակի գեների պատճէնների քանակը, ինչը յայտնի է որպէս գեների չափաւորում:

Գեների պատճէնների ճիշտ քանակութիւնը վճռական նշանակութիւն ունի մարդու նորմալ զարգացման եւ գործունէութեան համար: Գեների չափի փոփոխութիւնները կարող են առաջացնել այնպիսի հիւանդութիւններ, ինչպիսին է MECP2 պատճէնման համախտանիշը (նեարդային համակարգի զարգացման հազւադէպ խանգարում):

Օգտագործելով ԴՆԹ սեքւենաւորման առաջաւոր մեթոդները՝ հետազօտողները պարզել են ճիշտ տեղերը, որտեղ ԴՆԹ այդ հատուածները փոխում են շաբլոնները, ինչը յանգեցնում է մի շարք գեների փոփոխութեան, ներառեալ MECP2-ի:

# Մոլեկուլային թիրախի ակտիւացումը վերացնում է ծերացման բազմաթիւ նշանները

Տեխասի համալսարանի MD Anderson Cancer Center-ի գիտնականները ցոյց են տուել, որ տելոմերազ ֆերմենտի իրայատուկ ենթամիաւորի «պատանեկան» մակարդակի թերապեւտիկ վերականգնումը կարող է զգալիօրէն նուազեցնել ծերացման նշաններն ու ախտանիշերը նախակլինիկական մոդելներում:

Եթէ այս արդիւնքները հաստատուեն կլինիկական փորձարկումներում, դա կարող է ունենալ թերապեւտիկ նշանակութիւն տարիքային հիւանդութիւնների բուժման համար, ինչպիսիք են Ալցհէյմերը, Պարկինսոնը, սրտի հիւանդութիւնը եւ քաղցկեղը: Cell ամսագրում հրապարակուած ուսումնասիրութիւնը յայտնաբերել է ցածր մոլեկուլային միացութիւն, որը վերականգնում է տելոմերազի հակադարձ տրանսկրիպտազի (TERT) ֆիզիոլոգիական մակարդակը, որը սովորաբար ճնշւում է ծերացման սկզբում:

Աւելի հին լաբորատոր մոդելներում TERT մակարդակի պահպանումը նուազեցնում էր բջիջների ծերացումը եւ հիւսուածքների բորբոքումը, խթանում նոր նէյրոնների ձեւաւորումը, բարելաւում յիշողութիւնը եւ ուժեղացնում նեարդամըկանային ֆունկցիան, ինչը մեծացնում էր ուժն ու կողմնորոշումը:

Գիտնականները պարզել են, որ TERT-ը ոչ միայն երկարացնում է տելոմերները, այլեւ գործում է որպէս տրանսկրիպցիայի գործօն, որն ազդում է բազմաթիւ գեների արտայայտման վրայ, որոնք կառավարում են նէյրոգենեզով, ուսմամբ ու յիշողութեամբ, բջիջների ծերացմամբ եւ բորբոքմամբ:

«TERT-ի էպիգենետիկ ճնշումը կարեւոր դեր է խաղում բջիջների ակտիւութեան նուազման հարցում, ինչը նկատւում է ծերացման սկզբում, կարգաւորելով գեները, որոնք մասնակցում են ուսուցման, յիշողութեան, մկանների ֆունկցիայի եւ բորբոքման մէջ,- պատմել է բժշկական գիտութիւնների դոկտոր, քաղցկեղի կենսաբանութեան պրոֆեսոր



Ռոնալդ Դեպինյոն:- Երիտասարդ տարիքում արեան մէջ TERT-ի մակարդակը դեղաբանօրէն վերականգնելով, մենք վերածրագրաւորեցինք այս գեների արտայայտումը, ինչը յանգեցրեց ճանաչողական ֆունկցիայի եւ մկանների աշխատունակութեան բարելաւմանը՝ միաժամանակ վերացնելով տարիքային բազմաթիւ հիւանդութիւնների հետ կապուած յատկանիշերը»:



Թալինի հետ




# Ստեղծուել է սրտի ինտեգրուած բջջային քարտէզ, որը բացայայտում է սրտի ֆիբրոզի գործընթացը

Աւստրալիայի Վիկտոր Չանգի անուան սրտի հետազօտութիւնների ինստիտուտի գիտնականները ստեղծել են սրտի բջիջների իր տեսակի մէջ առաջին ինտեգրուած քարտէզը, որը բացայայտում է սրտի ֆիբրոզի՝ սրտի անբաւարարութեան հիմնական պատճառի, գործընթացը:

Ուսումնասիրութիւնը, որը հրապարակուել է Science Advances ամսագրում, ուսումնասիրել է նաեւ սրտի անբաւարարութեան այլ մոդելներ, որոնք առաջանում են աորտայի ստենոզի կամ հիպերտոնիայի հետեւանքով առաջացած արեան բարձր ճնշումից:

Այս բացայայտումը նոր հնարաւորութիւններ է բացում նպատակային դեղամիջոցների մշակման համար, որոնք կանխում են սպիների ձեւաւորումը սրտի նոպայից յետոյ:

Սրտի նոպայի ժամանակ եւ դրանից յետոյ սրտի մկանները վնասւում են, ինչի հետեւանքով առաջանում է սպիաւոր հիւսուածք, որը կորցնում է ամողջ սրտամկանի առաձգականութիւնն ու կծկողականութիւնը:

Այս վնասուածքն անդառնալի է եւ կարող է ազդել արեան մղման սրտի ունակութեան վրայ՝ ի վերջոյ յանգեցնելով սրտի անբաւարարութեան:

Պրոֆեսոր Ռիչարդ Հարուին, որը ղեկավարել է հետազօտութիւնը դոկտոր Ռալֆ Պատրիկի եւ դոկտոր Վայբհաօ Ջանբանդրուի հետ միասին, ասում է, որ այս բացայայտումը կարեւոր քայլ է սրտի ֆիբրոզի ըմբռնման համար, որն ուղեկցում է սրտի հիւանդութեան գրեթէ բոլոր ձեւերին, ներառեալ արեան բարձր ճնշման պատճառով սրտի գերբեռնուածութիւնը:

«Ֆիբրոզն օրգանիզմի ապաքինման գործընթացի անբաժանելի մասն է: Բայց սրտում, եթէ հիւանդութեան պատճառները չվերացուեն, գործընթացը կարող է շատ առաջադիմել՝ առաջացնելով սպիներ, որոնք անչափ վնասակար են սրտի աշխատանքի համար եւ սրտի անբաւարարութեան հիմնական պատճառն են:



«Առաջին անգամ, օգտագործելով յեղաշրջող տեխնոլոգիա, որը թոյլ է տալիս վերլուծել գեների արտայայտումը առանձին բջիջներում, մենք կարողացանք քարտէզագրել սրտի ֆիբրոզի զարգացմանը մասնակից բջիջների առաջադիմող վիճակները եւ այն, թէ ինչպէս են այդ բջիջները զարգանում օրէցօր»,- նշել է պրոֆեսոր Հարուին:

Գիտնականների թիմը վերլուծել է ՌՆԹ-ստորագրութիւնները 100,000 առանձին բջիջներից՝ կենտրոնանալով ֆիբրոզում ներգրաւուածների վրայ՝ համակցելով սրտի տարբեր հիւանդութիւնների մի քանի առաջադէմ հետազօտութիւնների տուեալները:

Սա թոյլ է տուել նրանց ստեղծել մկան մոդելի սրտի ինտեգրուած բջջային քարտէզ, որը ճշտօրէն որոշում է ֆիբրոզի հետ կապուած բջիջներն ու ուղիները:

Հետազօտութեան ընթացքում յայտնաբերուել են հանգստի մէջ գտնուող բջիջներ, ակտիւացուած բջիջներ, բորբոքային պոպուլիացիա, բաժանուող բջիջներ եւ մասնագիտացուած բջիջներ, որոնք կոչւում են միոֆիբրոբլաստներ եւ մատրիֆիբրոցիտներ:

Պարզուել է, որ միոֆիբրոբլաստները, որոնք համարւում են սպիների առաջացման հիմնական գործօնները, սակայն բացակայում են առողջ սրտում, սկսում են ձեւաւորուել մկան մոդելի մօտ սրտի նոպայից երեք օր անց՝ հասնելով գագաթնակէտին հինգերորդ օրը:

Այնուհետեւ դրանք վերածւում են մատրիֆիբրոցիտների ձեւի, որոնք կարող են խոչընդոտել սպիի ներծծմանը:

**News.am Medicine**

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակուած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ԱՐԱ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ

ցաւալի մահուան քառասնօրեակի առթիւ՝ ուրբաթ, յունիսի 28-ին, Ս. Սարգիս եկեղեցում, Ս. Պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Յովհաննիսեան, Միքայէլեան, Կարապետեան, Անդոնեան, Թաշճեան, Թումաթարեան , Սոհրայի, Ախթէ, Ամիրի Գէորգ, Դանիէլեան, Մանուկ Խալոյեան, Քեշիշեան, Մարգարեան եւ Աւետեան ընտանիքներ՝ հարազատները եւ խնամիները :

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակուած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ԱՐԱՔՍ ԹԱՀՄԱԶԵԱՆԻ (ՇԻՐՒԱՆԵԱՆ)

ցաւալի մահուան քառասնօրեակի առթիւ՝ ուրբաթ, յունիսի 28-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում, Ս. Պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Արփի եւ Ռազմիկ Թորոսեաններ՝ դուստրը եւ փեսան:

Արմէն եւ Անի Շիրւանեաններ՝ որդին եւ հարսը՝ ընտանեօք:

Յովսէփ եւ Ժուլիէտ Թահմազեաններ՝ եղբայրը եւ իր կինը՝ ընտանեօք:

Գուրգէն եւ Թելլօ Թահմազեաններ՝ եղբայրը եւ իր կինը՝ ընտանեօք:

Ռուբիկ եւ Վրէժուհի Թահմազեաններ՝ եղբայրը եւ իր կինը՝ ընտանեօք:

Ծաղկուշ եւ Վրէժ Խաչատրեաններ՝ քոյրը եւ իր ամուսինը՝ ընտանեօք:

Ռաֆիկ եւ Սրբուհի Թահմազեաններ՝ եղբայրը եւ իր կինը:

Նորայր եւ Ռուզան Թահմազեաններ՝ եղբայրը եւ իր կինը՝ ընտանեօք:

Այլին եւ Ռաֆիկ Պարսամեաններ՝ քոյրը եւ իր ամուսինը՝ ընտանեօք:

Դաւիթ եւ Օֆիկ Շիրւանեաններ՝ փազրը եւ իր կինը՝ ընտանեօք:

Շիրւանեան, Թահմազեան, Թորոսեան, Նարթինեան, Ղարիբեան, Բաղրամեան եւ Յարութիւնեան ընտանիքներ՝ հարազատները:

## ՄԱՀԱԶԴ - ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակուած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ԱՇՈՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ յունիսի 8-ին, Ամերիկայում:

Հանգուցեալի մահուան առթիւ՝ ուրբաթ, յունիսի 28-ին, Ս. Սարգիս եկեղեցում, Ս. Պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Յովհաննիսեան, Միքայէլեան, Թաշճեան, Յովակիմեան, Ջան Աւլանեան, Բաղումեան եւ Բաբումեան ընտանիքներ՝ հարազատները խնամիները:

## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Այսու ազգային մարմինների, հիմնարկութիւնների, միութիւնների, դպրոցների եւ ընկերութիւնների ու բոլոր յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում, որ իրենց **յայտարարութիւնները օրաթերթիս յանձնեն առ. ժամը 8-ից մինչեւ կ. յ. ժամը 2-ը ամենաուշը երեք օր (աշխատանքային օր) նախքան տպագրութեան թւականը,** բացի **մահազդերից,** որոնք ընդունւում են նաեւ նոյն օրը առաւօտեան՝ մինչեւ ժամը 9-ը:

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ


آگهی استخدام

SONAX
MADE IN GERMANY

شرکت آلفا حرکت پرتوان (سوناکس ایران)
در بخش حسابداری و امور مالی نیرو جذب میکند

جنسیت: خانم
سابقه کار : ۲ سال
حقوق و مزایا : توافقی
تحصیلات مورد نیاز : کارشناسی
روزهای کاری : شنبه تا پنجشنبه
آدرس : تهران ، محدوده زعفرانیه

متقاضیان محترم
رزومه های خود را به آدرس ایمیل زیر ارسال کنند
cv@ahp-co.com


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

**«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը**

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համաձայնելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16

Հեռ.՝ 88761154

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ


ՎԱՐՁՈՒ Է ՏՐՒՈՒՄ

Միրզայէ Շիրազի պող., 22-րդ փողոցում
120 քառ. մետր տարածութեամբ գտնուող մի յարկաբաժին:
09126490447



Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل
سخت افزار
نرم افزار
شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ۶



ԱԼԻՔ-ի Internet-ային էջն է
www.alikonline.ir



ԱԼԻՔ Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ - ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir



ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան



نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر
QeshmAir
سفر دوستان قرن
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY
شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن
Թռիչքներ է իրականացնում
երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը, իսկ
շաբաթ եւ երեքշաբթի օրերը
«Ասեման» աւիաընկերութեան միջոցով
թռիչքներ են իրականանալու
IRAN ASEMAN AIRLINES
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف
WWW.SAFARDOUSTAN.COM
۸۸۵۱۴۰۵۰





مسافربری بین المللی گیتی پیما ایران
شرکت انار
«ԳԻԹԻ ՓԷՅՄԱ ԻՐԱՆ»
«ԱՆԱՐ» ուղեւորափոխադրումների ընկերութիւն
Միջպետական ուղեւորափոխադրումների ընկերութիւնը ունի աւելի քան 30 տարւայ փորձ:
ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ
ԱՄԷՆ ՕՐ, ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԸ 10:00
Երեւանից մեկնում ժամը 12:30, ամէն օր Կիլիկիա աւտոկայանից Անար - Գիթի Փէյմա գրասենեակից

- Բարձրակարգ 25 տեղանոց VIP աւտոբուսներ
- Մոնիտոր (լիցքաւորիչ յարմարանքներով)
- Բացւող յարմարաւէտ նստատեղեր
- Փորձառու վարորդներ
- Կատարւում են նաեւ բեռնափոխադրումներ





ارمنستان – ایروان ترمینال کیلیکیا شرکت انار ۰۰۳۷۴۱۰۵۴۴۱۴۴ – ۰۰۳۷۴۹۴۵۸۰۸۸۸
۰۰۳۷۴۷۷۳۰۴۴۴۵ مدیریت در ارمنستان زاکووسیان
تهران– پایانه غرب شرکت گیتی پیما ایران ۴۴۶۳۲۰۰۷–۳۲۰۰۸
تهران–پایانه جنوب شرکت گیتی پیما ایران ۵۵۰۴۲۵۰۹–۵۵۰۴۲۵۱۰
Էրիկ تهران– نارمک میدان ۸۵ پلاک ۳۲ ۰۹۱۲۹۶۸۲۲۰۳ – ۷۷۲۸۶۶۵۸–۷۷۰۳۳۶۶۹
اصفهان– پایانه‌کاوه شرکت گیتی پیما ایران ۰۳۱ ۴۳۵۹۰۶۰–۰۳۱ ۴۳۵۹۰۶۱
شیراز – پایانه کاراندیش شرکت گیتی پیما ایران ۰۷۱ ۳۷۳۰۵۲۶۶

## ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակւած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



**ՍՄԲԱՏ (ՎԱՀԻԿ) ՄԱՐԳԱՐԵԱՆԻ**

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ երկուշաբթի, յունիսի 24-ին:

Թաղումը կը կատարւի ուրբաթ, յունիսի 28-ին, ժամը 14:30-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Ցուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ ժամը 13:30-ին ներկայ գտնուել «Մասիս» անուշարանի (Մասուն քաղաքամաս) մօտ՝ գերեզմանատուն մեկնելու համար:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան սրահում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Սրբուհի Ներսիսեան (Մարգարեան)՝ այրին:

Ռայմոնդ, Լուիզա, Էլինոր եւ Բերնադեթ Մարգարեաններ՝ որդին, հարսը եւ թոռները:

Էդին, Ալէք եւ Էմիլի Մարգարեաններ՝ որդին եւ թոռները:

## ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակւած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



**ԱՐԱՔՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ (ՄԵԼՔՈՄԵԱՆ)**

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ երկուշաբթի, յունիսի 24-ին:

Թաղումը կը կատարւի ուրբաթ, յունիսի 28-ին, ժամը 13:30-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Ցուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ ժամը 12:30-ին ներկայ գտնուել հանգուցեալի բնակարանում՝ գերեզմանատուն մեկնելու համար:

**ՀԱՍՑԷ՝**

Օսթադ Մոթահարի պող., Ֆաջր պող., Աֆշար փողոց, համար 2, 2-րդ զանգ:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Հ. Ուս. «Չհարմահալ» միութեան սրահում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Քամարզարեան, Նիկոլեան, Յովհաննիսեան, Մելիքեան եւ Դաւթեան ընտանիքներ՝ հարազատները:

**«Արարատ»**
**Ամէն տեսակ տնային իրերի գնորդ**
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،
لوازم چوبی آنتیک و خرده

**Հեռ.՝ 88523388**

## Թ. Հ. Թ. Պատգամաւորական ժողովի հրաւէր

Այսու յարգոյ պատգամաւորներին հրաւիրում ենք մասնակցելու Պատգամաւորական ժողովին՝ թւականիս յուլիսի 8-ին, 9-ին եւ 10-ին ժամը 18:00-ին, ազգային առաջնորդարանի դահլիճում, հասցէ՝ Օսթադ Նեջաթօլլահի պող., համար 295:

**Օրակարգ**

1-Տէրունական աղօթք
2-Ժողովի բացում
3-Ներկաների ստուգում
4-Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ազգային Կենտրոնական վարչութեան Քաղաքական ժողովի անդամ՝ Յովսէփ Աւետեանի խօսք
5-Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ Հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր՝ Արա Շահվերդեանի խօսք
6-Թ. Հ. Թ. Կրօնական խորհրդի բարոյական եւ նիւթական տեղեկագրի ընթերցում եւ քննարկում
7-Թ. Հ. Թ. Թեմական խորհրդի բարոյական եւ նիւթական տեղեկագրի ընթերցում եւ քննարկում
8-Թ. Հ. Թ. Հաշուեքննիչ մարմնի զեկոյց
9-Առաջարկների քննարկում եւ հաստատում
10- Առաջիկայ երկամեայ տարեշրջանի նախահաշւի քննարկում եւ հաստատում
11- Քւէախոյզ յանձնախմբի ընտրութիւն
12-Ընտրութիւններ՝
ա. Կրօնական խորհրդի
բ. Թեմական խորհրդի
գ. Հաշուեքննիչ մարմնի
13- Ներքին Գործոց նախարարութեան ներկայացուցչի խօսք
14- Պատգամաւորական ժողովի ատենապետի խօսք
15- Թեմակալ առաջնորդի խօսք եւ փակում:

**Թ. Հ. Թ. ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԴԻՒԱՆ**

بدینوسیله از اعضای محترم مجمع نمایندگان شورای خلیفه‌گری ارامنه تهران و شمال دعوت می شود تا در نشست مجمع عمومی و انتخابات شورای خلیفه‌گری ارامنه تهران و شمال و هیئت حسابرسان که در روزهای ۱۸، ۱۹ و ۲۰ تیر ماه ۱۴۰۳ راس ساعت ۱۸ در محل سالن اجتماعات این شورا به نشانی نبش استاد نجات الهی شماره ۲۹۵ برگزار می گردد، حضور بهم رسانند.

**دستور جلسه**

۱- افتتاح جلسه
۲-استماع گزارش فعالیتهای دو ساله و عملکرد دو ساله مالی شورای خلیفه‌گری ارامنه تهران و شمال
۳- استماع و تصویب گزارش هیئت حسابرسان
۴- بررسی و تائید عملکرد شورا و هیئت حسابرسان
۵- بررسی و تصویب پیشنهادات
۶- رسیدگی و تصویب بودجه دوره آینده
۷- انتخاب هیئت نظارت بر اخذ آراء
۸- انتخابات اعضای شورای خلیفه گری ارامنه تهران و شمال و هیئت حسابرسان
۹- شمارش آراء و اعلام نتایج توسط هیئت رئیسه مجمع
۱۰-سخنان نماینده وزارت کشور
سخنان رئیس مجمع عمومی
سخنان خلیفه ارامنه تهران
۱۱- ختم جلسه

**هیئت رئیسه مجمع نمایندگان خلیفه گری ارامنه تهران و شمال**

## Թեկնածուների....

(Շար. 1-ին էջից)

*արտադրել, այդ թւում՝ «Շահիդ ջումհուր-Սահդ ջումհուր»: Ջալիլիի շտաբը նաեւ անցել է հեշթէգների գրոհ տարածելով «Ահդէ Սահդ» (երջանկութեան խոստումը) հեշթեգը:*

**Ձաքանին հետաքրքւած է կինօարւեստով**

*Զաքանիի նախընտրական շտաբում, կիբերտարածութիւնում բաններներ ու գովազդային պաստառներ չեն օգտագործւում: Զաքանիի շտաբն աւելի շատ տեսանիւթեր է օգտագործում, եւ յատկապէս քննադատում Ռոհանիին աջակցող թեւին: Իրանական ընտանիքներին էներգիայի սպառման չափով ոսկու սուբսիդաւորման խոստումը եւս գտնւում է վիրտուալի առանցքում:*

**Ղազիզադէ Հաշեմին՝ աւելի քիչ յայտարարագրերով**

*Ղազիզադէ Հաշեմիի նախընտրական քարոզարշաւը նկատելիօրէն աւելի թոյլ է, քան միւս թեկնածուների դէպքում: Նա ամէն անգամ կրկնում է նոյնը՝ իր նախընտրական շտաբը իրանական ընտանիքներն են:*

**Ղալիբաֆի քարոզարշաւի առանցքում նրա քաղաքական ցենզն է**

*Ղալիբաֆն ունի ամենաակտիւ եւ, հաւանաբար, ամենաթանկ նախընտրական թիմը: Սելեբրիտիներին իր շուրջը հաւաքելը եւս նրա շտաբի ռազմավարութիւններից է: Ի պատասխան իր ընտանիքի ապրելակերպի մասին խօսակցութիւնների՝ Ղալիբաֆը մատնանշում է իր յեղափոխականի պարզ կեանքը, ընտանեկան ծագումն ու մայրական տունը:*

*Նա երեւում է զինուորականներին յատուկ հագուկապով, երբ պատկերն ուղղւած է համապատասխան խաւին, իսկ պաշտօնական զգեստով ու կոստիւմով՝ տեխնոկրատ լսարաններում:*

## Նախագահական....

(Շար. 1-ին էջից)

հանդիպումներ կայացան ազգային իշխանութեան ներկայացուցիչների հետ:

Հանդիպման սկզբում, Թեմական խորհրդի ատենապետ Ճրտպ. Նորայր Արամեանը ողջունելով հիւրերին յայտնեց, որ ազգային իշխանութեան կողմից մշակւած քաղաքականութեան համաձայն, դիմած բոլոր թեկնածուների շտաբներին առիթ է տրւում ներկայացնելու իրենց պատկան թեկնածուի տեսակէտներն ու ծրագրերը: Նա համապարփակ գծերով ներկայացրեց իրանահայ եւ ի մասնաւորի թեհրանահայ համայնքի ազգային, կրօնական եւ համայնքային կառոյցի եւ վարչական տնօրինման մասին եւ բացատրութիւն տալով, կարեւորեց այն հանգամանքը, որ համայնքի անդամները իրենց բարձր գիտակցութեամբ խորհուրդներում եւ մարմիններում աշխատանքները իրականացնում են սիրողական մակարդակով: Նա նաեւ անդրադարձաւ միութիւնների յարկերի տակ իրականացւող մարզա-մշակութային աշխատանքներին:

Ընթացքում ընդհանուր անդրադարձ կատարւեց կրօնական փոքրամասնութիւններին առնչւող եւ հիմնականում համայնքիս յուզող հարցերին եւ առաջարկութիւններին:

Շտաբների ներկայացուցիչները նախ ներկայացրեցին իրենց թեկնածուի ընտրական ծրագրերը եւ կարեւորելով ընտրութիւններին ժողովրդի մասնակցութիւնը, այն բնութագրեցին, որպէս ժողովրդի միջամուխ լինելը երկրի ներքաղաքական կեանքին:

Երկու հանդիպումների ընթացքում կարեւորութեամբ անդրադարձ կատարւեց հայ եւ իրանցի ժողովուրդների բարեկամութեան ու գործակցութեան խոր արմատներին եւ նշւեց, որ Իրանի Իսլամական Հանրապետութեան մէջ դարեր ի վեր հաստատւած հայ համայնքը անբաժան մասն է կազմում Իրանի մեծ ընտանիքի, հետեւաբար Թեհրանի հայ համայնքը, որպէս լիիրաւ եւ հաւատարիմ քաղաքացիներ իրենց համար նւիրական պարտականութիւն են նկատում մասնակցութիւն բերելու ընտրութիւններին:

Հանդիպումների աւարտին Նորայր Արամեանը յայտնեց որ համոզւած է, որ ինչպէս միշտ, թեհրանահայ համայնքը խուռներամ շարքերով կը մասնակցի նախագահական ընտրութիւններին եւ մեր ժողովրդի մասնակցութիւնը դրական կը գնահատւի եւ կարտացոլւի տարբեր շրջանակներում:

Վերոնշեալ հանդիպումներին ներկայ էին Թեհրանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի ատենապետ Սուրիկ Աբնուսեանը եւ ատենադպիր Արտոյտ Ջոհրաբեանը, Թեմական խորհրդի ատենապետ Ճրտպ. Նորայր Արամեանը եւ խորհրդի ներկայացուցիչները եւ ազգային առաջնորդարանի դիւանապետը:

**Ազգային Առաջնորդարանի Հանրային կապի գրասենեակ**

**SET Coffee**
WE KNOW COFFEE
قهوه سِت
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
فروشگاه:
هفتم تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه:
شهرک صنعتی خوارزمی، بلوار ماگنولیا، پلاک A۱۱۷

**املاک هنرمندان**
● بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک۴
تلفن: ۸۸۸۴۵۵۷۷– ۸۸۸۴۵۵۶۶
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

**ՔԱՐԻՄԻ**
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،
مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.՝ 88594063 եւ 09121193212

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Օժանդակելու համար օրաթերթին՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

**«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը**

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

**Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16**
**Հեռ.՝ 88761154**

**«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ**

## Աւստրիական....

(Շար. 1-ին էջից)

*փուլ, իսկ լեհերը 1 միաւորով եզրափակեցին մրցաշարային աղիւսակն ու դուրս մնացին հետագայ պայքարից: Հոլանդացիներն էլ թէպէտ 4 միաւորով հանգրւանեցին երրորդ հորիզոնականում, սակայն արդէն յստակ է, որ հնարաւորութիւն են ստացել հանդէս գալու փլէյ-օֆֆում:*

*C խմբի եզրափակին հանդիպումները դիտարժան չստացւեցին: Դանիա-Սերբիա, Անգլիա-Սլովակիա հանդիպումներում գրանցւեց գոլազուրկ՝ 0:0 արդիւնքը: Այսպիսով, այս խմբից Անգլիան վաստակելով 5 միաւոր առաջին տեղով դուրս եկաւ յաջորդ փուլ: Դանիան եւ Սլովակիան վաստակեցին 3-ական միաւոր, սակայն Դանիացիները յաւելեալ ցուցանիշերի արդիւնքում երկրորդ տեղով դուրս եկան յաջորդ փուլ: Սլովակներին եւս յաջողւեց ապահովել իրենց տեղը փլէյ-օֆֆ-ում: Սերբիան էլ եզրափակելով աղիւսակը, հրաժեշտ տւեց մրցաշարին:*